

\* Մարտ 9-ին Praga շոգենարը Յունաստանէն վենետիկ բերաւ 120) որբեր՝ առաջնորդութեամբ Ղերի: Տ. Պետրոս վ. Հովասափեանի: Անոնցմէ 34ը՝ որբուհիներ՝ փոխադրուեցան իսկոյն Թուրքիոյ Հայկ. Որբանոցը, իսկ մնացած որբերը ի Ֆիէսոյ, ուր կը ձևացնեն երկրորդ Որբանոց մը Միթիթարեան Ուխտի հսկողութեան տակ:

\* Կեսարիայէն տարագրուած Հայեր Պէյրութի մէջ զորգի գործարան մը հաստատելով՝ գործ առաջարկած են 4(X) չափահաս որբուհիներու, որ պիտի աշխատին տարագիր հայ կիներու և Նպաստամատոյցի պաշտօնեաներուն հսկողութեան ներքե (ժող. 2այնը):

\* Նիկոսիայի մէջ փետր. 15ին կատարուեր է Մէլզոնեան հաստատութեան հիմնարկութիւնը, որուն համար գնուած է 8(X) արտավար տարածութեամբ հող: Ներկայ գտնուած են կառավարիչը, անգղ. պաշտօնեաներ, Յունաց և Լատինաց առաջնորդները, Սարահան և կարօնեան եպիսկոպոսները, յոյն եկեղեցականներ, թերթերու տնօրէններ և այլք: Կիպրոսի զինուորներէն գումարտակ մը՝ զինուորական նուագախմբով մասնակցեր է հաղարարու բազմութեան հետ:

\* Պրագիլիոյ Սէն Փալօ քաղաքը հաստատուող հայ գաղթականութեան մասին տեղւոյն հոգևոր հովիւը ի մէջ այլոց հետեալ տեղեկութիւններն հաղորդած է Պատրիարքարան. 10-15

տուն կարծուած հայութիւնը 60ի չափ է: Հայերը Պրագիլիոյ մէջ միջակ դիրք ունին և կը զբաղին ընդհանրապէս առևտրով և արհեստով: Նորակազմ Յանձնաժողովը շէնք մը վարձեր է ծառայելու համար իբր եկեղեցի, ժամատուն և հիւրանոց. հոս 5(X) նորահաս գաղթականներ պատսպարուեր են: Ասի փաւօն զատ Հայեր կան Ռիօ Տը Լանէյրօ 4(X) հողի, Սանթօս 1(X) ընտանիք և 15 ամուրիներ, Մաթօկրօս 1(X) ամուրիներ, Սալթօ 5 ընտանիք, Դարաէնօփօլիս 2 ընտանիք, Սան Դուազիմ 2 անձ, Փանթաբօրօ 3 ընտանիք, Քօնքիսթա 3 ընտանիք, Օչասթօ 8 ընտանիք:

\* Աղբքսանդրապօլէն 1(X)-12 վերտո հեռաւորութեան վրայ գտնուած է մեծ քանակութեամբ հանքային ներկ: Փորձը բաւական յաջող հետեանք ունեցած է, կ'ըսեն, և քիմիական հետազօտութիւն կը կատարուի:

\* Կազմակերպուած է Աղբքսանդրապօլի մէջ առաջին հայկական հրէշ գունդը Նպաստամատոյցի գործաւորներէն, բնիկ պաշտօնեաներէն և չափահաս որբերէն, պաշտպանելու համար Նպաստամատոյցի կեդրոնական որբանոցը, ուր կը գտնուին 17, (XX) որբեր:

\* Պաշտօնական տեղեկութիւններու համաձայն՝ Հայկական կառավարութիւնը ի մէջ այլոց արտօններ է որ Էլմիաձին ունենայ իր կրօնական պարբերաթիւթիւն, և ըստ այսմ՝ պիտի հրատարակուի մօտ ժամանակէն «Արարատ»ը:

## Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

Տիար Հայկ Աձմեանէ՝ իր երկերէն

Երուկաբաղ վասպուրականի Հայ ժողովրդական խմբադասութեան, Առաջին փունջ. Էջմիածին 1917. էջ 104 (հրտրկ. Տ. Վրթ. Մ. Վ. Յակոբեանի):

Հայրենի Յիշատակներ, Ա. Դեպի Նաւեկայ վանքը. Էլմիաձին 1918. (Արտատպ. «Արաբատ» է) էջ 16:

Խորիւնեան Հայրիկ, Եննդեան Հարիւրամեակի տօնի, 1820-1920. Էլմիաձին 1920, էջ 16:

Բաղին (Սրբոյց 1923. Թարգի, էջ 128:

Մուսիս (Սրբոյց (Պատի) 1924. Թարգի: «Այգ» աշխատանքական շաբաթաթիւթի 1921 տարւոյ թիւ 74ը:

ՎԱՂԱՐՇԱՆ. — Բանաստեղծութիւններ 1901 - 1920. Ֆրէզօ 1921. Տպ. «Արարատ»ի, էջ 596. գին տու. 2, 50):

FRANCIS MARION Rust. — Evolution of Democracy. Tabriz 1923, էջ 155: